« ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃՈՎԻՆԱՐ ԳՅՈՒՂԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2028թթ.

ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ `

Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության համալիր գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքների պահպանմանն ու սերունդներին փոխանցմանը, և կոչված է նպաստելու նոր գիտելիքների ստեղծմանը, անձնային և սոցիալական զարգացման ու առաջընթացի ապահովմանը:

ՀՀ Սահմանադրության 3-րդ՝ անփոփոխելի հոդվածի համաձայն՝ Մարդը բարձրագույն արժեք է[1], և այդ արժեքը պահանջում է ֆիզիկական, մտավոր, սոցիալ-մշակութային, բարոյական, հոգեբանական զարգացում: Մարդն առավել քան արժևորվում է կրթության ու դաստիարակության շնորհիվ՝ ուսումնառության գործընթացում ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, բարձր արժեքներ, ձևավորելով կենսահաստատ դիրքորոշում, դրսևորելով համարժեք վերաբերմունք և ճիշտ կողմնորոշվելու կարողություն ցանկացած իրավիճակում:

[1]. ՀՀ Սահմանադրություն, 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով // https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510

Անձի՝ պետականորեն կարգավորվող կրթության ու դաստիարակության գործընթացը սկսվում է նախակրթարանում, ապա տարրական դպրոցում և շարունակվում կրթության համակարգի հետագա օղակներում՝ ծառալելով մարդկային կապիտալի զարգացման նպատակին:

Ինչպես սահմանված է ՀՀ Կառավարության 2021-2026թթ. ծրագրի՝ մարդկային կապիտալի զարգացմանը նվիրված 4-րդ բաժնի 4.3-րդ կետում, ‹‹Գերակա խնդիր է կրթության և գիտության զարգացումը, որի շնորհիվ միայն հնարավոր է հասնել կայուն ու ներառական զարգացման ու համընդհանուր բարեկեցության: Մարդկանց գիտելիքների և հմտությունների ուղղությամբ ներդրումները երկրի զարգացման գրավականն են: Կրթության ոլորտում նախատեսվող աշխատանքները միտված են լինելու քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ, մրցունակ և ապագան իր սեփական երկրում պատկերացնող քաղաքացու ձևավորմանը: Ոլորտի զարգացումը սերտորեն կապակցվելու է պետության զարգացման ռազմավարությանը և գերակայություններին[2]››:

Այսպիսով, պետության զարգացման ռազմավարության և գերակայությունների համատեքստում առաջնահերթ ուղղություն է դպրոցի և առաջին հերթին՝ տարրական դպրոցի արդյունավետ կառավարումը, գործունեության բարելավումը, արդյունքահեն աշխատանքի և կրթության ապահովումը, ինչին պետք է նպատակաուղղված լինեն դպրոցի գործադիր մարմնի և ողջ մանկավարժական կազմի ջանքերը:

[2].ՀՀ Կառավարության 2021-2026թթ. ծրագիր՝ ՀՀ Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշման Հավելված // https://www.gov.am/files/docs/4586.pdf

Բովանդակություն

1. Նախաբան
2. Ուսումնական հաստատության գործունեությունը:
3. Իրավիճակի վերլուծություն՝ ուժեղ և թույլ կողմերը:
4. Ուսումնական հաստատության շենքային պայմանները:
5. Գործողություններ, որոնք կապահովեն նպատակների և խնդիրների իրականացումը:
6. Գործողությունների ժամանակացույցը:
7. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման ժամանակացույցը և պատասխանատուները:
8. Ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը կյանքի կոչելու համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական բազան:
9. Զարգացման ծրագրի հնարավոր ռիսկերը:
10. Զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները:
11. Զարգացման ծրագրի կատարման արդյունքի գնահատման չափանիշները:

ՆԱԽԱԲԱՆ

‹‹ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինարի տարրական դպրոց›› ՊՈԱԿ-ի զարգացման ծրագիրը կազմվել է՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությունը, կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությունը, մասնավորապես՝ ‹‹Կրթության մասին››, ‹‹Հանրակրթության մասին››, ‹‹Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին›› ՀՀ օրենքները, Կառավարության 2021-2026թթ. ծրագրի հիմնադրույթները, Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը, Դպրոցի կանոնադրությունը, ելնելով ուսումնական հաստատության հիմնախնդիրներից և ունենալով առկա հնարավորությունների ու արձանագրած հաջողությունների հաշվառմամբ դրանց լուծման ուղիների նախանշման և զարգացման հստակ նպատակադրում:

Գերակա նպատակն է՝ տարրական դպրոցին առաջադրվող արդի պահանջներին համապատասխան կրթության կազմակերպումը, որակյալ ուսուցման և ուսումնառության ապահովումը, աշակերտների համակողմանի դաստիարակությանը միտված ծրագրերի իրականացումը:

‹‹Հանրակրթության մասին›› ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետի համաձայն՝ տարրական կրթությունը պարտադիր կրթության առաջին մակարդակն է, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին աստիճանը[3]:

Ուստի, հույժ կարևոր է տարրական կրթության հստակ կազմակերպումը և արդյունավետ իրականացումը:

Մենք ելնում ենք այն իրողությունից, որ տարրական դպրոցի ամուր հենքի վրա է կառուցվում ՀՀ հանրակրթության ողջ համակարգը, որի որակը կանխորոշում է անձի հետագա մասնագիտական կրթության արդյունավետությունը:

Որպես դպրոցի գործադիր մարմնի հավակնորդ՝ առաջարկում եմ զարգացման ծրագրի իրականացման գործողություններ և միջոցառումներ՝ հաշվի առնելով նախորդ տարիների աշխատանքային փորձը, կատարած աշխատանքներն ու ձեռքբերումները:

[3]. ‹‹Հանրակրթության մասին›› ՀՀ օրենք // https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908

Ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը կարող է կյանքի կոչվել դպրոցի ողջ աշխատակազմի համատեղ ջանքերի արդյունքում՝ սերտորեն համագործակցելով կրթության կազմակերպման իրավասու մարմինների, պետական և համայնքային ինստիտուտների, ծնողական համայնքի, ներքին ու արտաքին բոլոր շահակիցների հետ:

Ուսումնական հաստատության գործունեությունը

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինարի տարրական դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Դպրոց) հիմնադրվել է 1930 թվականին: Եղել է գյուղի միակ միջնակարգ դպրոցը: 1975 թվականից գործել է որպես 8-ամյա դպրոց, ապա վերակազմակերպվել է և 2004 թվականից գործում է որպես տարրական դպրոց:

- Դպրոցը իրավունք ունի իրականացնելու տարրական կրթության ընդհանուր ծրագիր:
- Պետական ռեգիստրի N 03Ա057018
- Դպրոցն ունի սահմանային 115 տեղ
- Լիցենզիայի N 0048
- Իրականացնում է նաև նախադպրոցական կրթություն՝
- Սահմանային 50 տեղ
- Լիցենզիայի N 0255
- Դպրոցի հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ծովինար, 3-րդ թաղամաս, Հրապարակ թիվ 29
- Դպրոցի լրիվ անվանումը՝ ‹‹ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի տարրական դպրոց›› պետական ոչ առևտրային կազմակերպություն /ՊՈԱԿ/
- Էլեկտրոնային փոստի հասցե՝ tsovinar@schools.am
- Հեռախոսահամար՝ 077-22-50-54

Դպրոցի առաքելությունը

Դպրոցի առաքելությունն է՝

1. տարրական կրթական ծրագրի որակյալ իրականացումը, աշակերտակենտրոն, գրավիչ, ներառական ու անվտանգ կրթական միջավայրի ապահովումը, ուսուցման արդյունավետ մեթոդների և նորագույն տեխնոլոգիաների կիրառումը, աշակերտների համակողմանի դաստիարակությունը, սովորողների զարգացման, աշխարհայացքի ձևավորման, նախասիրություններին, հակումներին և ընդունակություններին համապատասխան հետագա մասնագիտական ծրագրերի ընտրության և յուրացման համար հիմքերի ստեղծումը,

2.ուսուցիչների շարունակական մասնագիտական, մանկավարժական, տեխնոլոգիական զարգացմանը նպաստումը,

3.ծնողական համայնքի, տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինների, կրթական, մշակութային ոլորտի կազմակերպությունների հետ համագործակցության ակտիվացումը:

Դպրոցի գործունեության սկզբունքներն են՝ օրինականությունը, ժողովրդավարությունը, աշակերտների և ուսուցիչների, ծնողների և գործընկերների արժանապատվության, իրավունքների և ազատությունների հարգումը, սովորողների՝ որակյալ տարրական կրթություն ստանալու իրավունքի ապահովումը, օրենքի առջև բոլորի հավասարությունը, ազնվությունն ու անշահախնդրությունը, հակակոռուպցիոն կրթական և աշխատանքային միջավայրի պահպանումը, պատասխանատվությունը, կարգապահությունը, բարեխղճությունը, Դպրոցի մասնակցային կառավարման կառուցակարգերի կիրառումը,

հաշվետվողականությունն ու արդյունավետ վերահսկողությունը, ուսուցիչների կողմից ընդհանուր և մասնագիտական բարեվարքության կանոնների պահպանումը և ՀՀ Սահմանադրությամբ ու օրենքներով սահմանված այլ հիմնարար դրույթները:

Տնօրենությունը և անձնակազմն ունեն ընդհանուր նպատակ և գործադրում են համատեղ ջանքեր՝ ապահովելու հալածանքից զերծ կրթական միջավայր, որտեղ բոլոր աշակերտները սիրված են և իրավահավասար, որտեղ գործում են սոցիալական արդարության և երեխայի լավագույն շահի սկզբունքները, կա փոխըմբռնում և արդյունավետ համագործակցություն ծնողական համայնքի հետ, սերտ են Դպրոց-աշակերտ-ուսուցիչ-ծնող կապերը:

- Մենք կրում ենք պատասխանատվություն աշակերտների որակյալ կրթության ու դաստիարակության համար,
- մենք կրում ենք պատասխանատվություն ծնողական համայնքի առջև,
- մենք կրում ենք պատասխանատվություն պետության առջև:

- Դպրոցի տնօրենությունը պատասխանատվություն է կրում դասվարների, ուսուցիչների, ուսումնական հաստատության բոլոր տարակարգերի աշխատակիցների աշխատանքի համար՝ ապահովելու նրանց գործառույթների բարեխիղճ ու արդյունավետ իրականացումը, որպեսզի ծնողները վստահ լինեն ժամանակակից պահանջներին համապատասխանող միջավայրում և չափանիշներով, ուսուցչական որակյալ կազմի կողմից իրենց երեխաների կրթության ու դաստիարակության հարցում:

Անձնակազմ

Դպրոցի ուսուցիչներն իրենց գործի գիտակներ ու նվիրյալներ են, ունեն համապատասխան մասնագիտական կրթություն, պարտաճանաչ են և պատասխանատու: Մեր նպատակն է արժևորել և խրախուսել դպրոցի անձնակազմի գործունեությունը, նպաստել ուսուցիչների կամավոր ատեստավորմանը, շարունակական մասնագիտական զարգացմանը:

Ժամանակակից ուսուցիչը պարտավոր է ապահովել որակյալ կրթություն և հետաքրքիր ու գրավիչ դարձնել ուսման գործընթացը սովորողների համար: Դպրոցում պետք է բացառել ցանկացած խտրականություն՝ պայմանավորված սեռով, հաշմանդամություն ունենալու փաստով, էթնիկական, կրոնական, լեզվական պատկանելությամբ, սոցիալական կարգավիճակով և այլ հանգամանքներով:

Սովորողներ

ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք[4]: Մեր պարտականությունն է սովորողների համար ապահովել այդ իրավունքի լիարժեք և արդյունավետ իրականացումը տարրական կրթության մակարդակում:

Անհատի կրթության և սովորելու իրավունքի լիարժեք իրացման համար Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը կարևորում է կյանքի տարբեր փուլերում մարդուն անհրաժեշտ որակյալ կրթական ծառայությունների ամբողջական և բազմազան փաթեթի հասանելիությունը յուրաքանչյուր համայնքում և բնակավայրում՝ նպատակ ունենալով ապահովել տարածքային խելամիտ և համաչափ զարգացում ու կյանքի որակի էական բարձրացում[5]:

---

[4]. ՀՀ Սահմանադրություն, 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով // https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510

[5].Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիր // https://www.irtek.am/views/act.aspx?aid=156043

Հենց այս հայեցակարգային դրույթներն են կազմում մեր՝ որպես տարրական դպրոցի տնօրենի հավակնորդի գործունեության ծրագրի հիմքը:

Սովորողների համար նախատեսում ենք միջոցառումների հաճախակի կազմակերպում, ինտելեկտուալ տարբեր մրցույթներին նրանց մասնակցության խրախուսում, կրթության նորարարական ձևերի ու մեթոդների կիրառում, ինքնուրույն աշխատանքի խրախուսում, ներուժի բացահայտում: Այս ամենի իրականացումը կնպաստի աշակերտների մտավոր աճին, ինչպես նաև հաղորդակցության և սոցիալական այլ հմտությունների զարգացմանը: Դպրոցում սովորողների մտավոր և ֆիզիկական զարգացման նպատակով կազմակերպվում են միջոցառումներ ինչպես մայրենի, այնպես էլ օտար լեզուներով (ռուսերեն, անգլերեն): Աշակերտները մասնակցում են տարբեր մրցույթների՝ ‹‹Կենգուրու››, ‹‹Մեղու››, ‹‹Արջուկ›› և այլն: Մասնակցում են նաև ‹‹Ծախմատ›› առարկայի մրցույթին: Միջոցառումները լուսաբանվում են, երեխաները ծնողների և համայնքի այլ անդամների ներկայությամբ խրախուսվում են:

Ուսման մեջ բարձր առաջադիմություն ցուցաբերած սովորողները պարգևատրվում են գովասանագրերով, ծնողներին հայտնում ենք շնորհակալություն դպրոցական և համայնքային միջոցառումների ընթացքում:

Միջավայր

Որակյալ կրթության կազմակերպման համար խիստ կարևոր է ուսուցողական, գրավիչ, տրամադրող, ապահով ու ներառական միջավայրի ստեղծումը, անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը, դասարանների, լաբորատորիայի, գրադարանի այնպիսի կահավորումը, որը կոգեշնչի աշակերտին, կտրամադրի ուսման և կձևավորի գեղագիտական ճաշակ:

Դպրոցի գրադարանը հագեցած է անհրաժեշը ուսումնական և գեղարվեստական գրականությամբ, որից օգտվում են սովորողները, ուսուցիչները և վարչական կազմը: Դպրոցի գրադարանը բաց է նաև համայնքի ընթերցասեր անդամների համար: Սակայն, գրադարանն ունի վերանորոգման և արդիականացման կարիք:

Ուսուցիչների և սովորողների համատեղ ջանքերով ստեղծվում են դիդակտիկ նյութեր, տեղեկատու պաստառներ:

Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացումը

Երրորդ հազարամյակում անհնար է կրթության կազմակերպում՝ առանց տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման: Հեռավար՝ առցանց ձևաչափը փրկօղակ հանդիսացավ նոր կորոնավիրուս համավարակի ընթացքում սոցիալական կենսագործունեության տարբեր ոլորտներում և հենց ուսումնական գործընթացում:

Դպրոցում ըստ ուսումնական պլանի նախատեսվում են տեսադասեր բոլոր առարկաներից: Դպրոցն ունի համակարգչային դասարաններ, դյուրակիր համակարգիչներ, համացանցային կապ:

Մանկավարժները, անցնելով համապատասխան վերապատրաստում, կարողանում են լիարժեք օգտագործել ՏՀՏ գործիքները , ժամանակակից կրթական տեխնոլոգիաներն ու նորարարությունները:

ՏՀՏ-ն օգնում է թե՛ ուսուցչին , թե՛ սովորողին: Այն օգնում է դասը դարձնել առավել հասանելի , մատչելի և հետաքրքիր, քանի որ երեխան տեղեկատվությունը մտապահում է և՛ տեսողական, և՛ լսողական հիշողությամբ: Աշակերտները ուսուցիչների հետ միասին կազմում են թեմատիկ շնորհանդեսներ: Այսպիսով՝ սովորողները դառնում են ոչ միայն տեղեկատվության պասիվ ընդունող, այլև փոփոխող, նորը ստեղծող, որն էլ զարգացնում է աշակերտների տրամաբանական, վերլուծական, ստեղծագործական մտածողությունը:

ՏՀՏ-ի կիրառումը ուսումնական գործընթացում

1. Նոր թեմայի ներկայացման մեթոդ
2. Ուսուցչի բացատրությունները լրացնող միջոց
3. Աշակերտի անհատական աշխատանքի ներկայացման միջոց
4. Գիտելիքի և կարողությունների ստուգման միջոց

ՏՀՏ-ի կիրառմամբ ուսուցիչը անընդհատ զարգանում և կատարելագործվում է որպես մասնագետ, ժամանակակից մեթոդների կիրառմամբ աշխատանքը դառնում է առավել արդյունավետ: Ձեռք է բերում նոր հմտություններ, կարողանում է ժամանակը ռացիոնալ օգտագործել և ուսումնական նյութը հետաքրքիր ձևով մատուցել աշակերտներին:

Դպրոցում բոլոր մանկավարժները վարում են իրենց էլեկտրոնային մատյանները emis.am էջում, ներկայացնում ուսումնական պլանները, հաշվետվությունները:

Մասնակցում են ԿՁՆԱԿ-ի կողմից կազմակերպած դասընթացներին teams հարթակում: Դպրոցը կարողանում է կազմակերպել հեռավար դասընթաց, ունի տեսադասերի համար առանձնացված դասարան՝ լուսացրիչի /պրոեկտորի/ և էլեկտրոնային գրատախտակի առկայությամբ:

Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

Առաջնային խնդիր ենք համարում Դպրոցում ապահովել բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր, զարգացնել սովորողների ազատ, քննադատական մտածողությունը, հասարակական ակտիվություն և պատասխանատվություն դրսևորելու հմտությունները:

Առաջնային է նաև սովորողների արժանապատվության, իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Հարկ է արդյունավետ ներառական մոտեցում ձևավորել ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ, յուրաքանչյուր սովորողի համար ապահովել կրթության մատչելիություն, ընձեռել հավասար հնարավորություններ, բացառել բոլոր տեսակի բացասական երևույթները, համագործակցել ՏՄԱԿ աշխատակիցների և ծնողների հետ:

Ուժեղ	Թույլ
1. Առկա են հավասար հնարավորություններ բոլոր աշակերտների համար: **2. Ձևավորվել է առողջ բարոյա-հոգեբանական միջավայր, կա հարգալից վերաբերմունք և ուշադրություն սովորողների նկատմամբ:** **3.Ուսուցիչները պատասխանատվությամբ են իրականացնում սովորողների կրթության ու դաստիարակության իրենց գործառույթները՝ դա համարելով իրենց առաքելությունը:**	**1. Ոչ բոլոր աշակերտների ընտանիքներում է կարևորվում կրթության իրավունքի պատշաճ իրականացման անհրաժեշտությունը:** **2.Արդյունավետ կրթության համար ոչ միշտ են նյութական ռեսուրսները բավարար:** **3. Նկատվում է գյուղում ապրող երիտասարդ ընտանիքների ձգտում դեպի մայրաքաղաք կամ այլ պետություններ, ինչը չի նպաստում դրական ժողովրդագրական իրավիճակին և Դպրոցի աշակերտների թվի աճին:**

4. Առկա են ուսման և աշխատանքի համար անհրաժեշտ պայմաններ:	

Հաստատության գործունեության նպատակն ու խնդիրները

Դպրոցի զարգացման ծրագիրը միտված է 2023-2028թթ. ընթացքում բարելավումներ իրականացնել տարրական կրթության ծրագրի իրականացման գործընթացում, լուծել Դպրոցում առկա խնդիրները, որպեսզի ապահովվեն առավել բարենպաստ պայմաններ աշխատողների և սովորողների համար:

Զարգացման ծրագրում ընդգրկված են հետևյալ ոլորտների բարեփոխումները.

- Կրթության որակի ապահովում և շարունակական բարձրացում:
- Դպրոց-աշակերտ-ուսուցիչ-ծնող կապերի ամրապնդում:
- Համագործակցություն համայնքի , ինչպես նաև համայնքում և հարակից համայնքներում գործող կրթօջախների հետ:
- Առավել ակտիվ համագործակցություն հոգեբանների, լոգոպեդների, մանկավարժա-հոգեբանական կենտրոնի և մասնագիտական այլ ծառայությունների տրամադրող անձանց հետ, որը կնպաստի երեխաների կարողությունների, հմտությունների զարգացմանը, կրթության գործընթացի բարելավմանը:

Դպրոցի զարգացման ծրագիրն իրականացնելու համար պետական բյուջեից հատկացվող գումարից բացի անհրաժեշտ է ընդգրկել նաև ֆինանսական այլ հոսքեր, դիմել դրամաշնորհային ծրագրերի, հովանավորների օժանդակությանը: Ինչպես նախկինում ունեցել ենք , ապագայում ևս ակնկալում ենք նոր բարերարների աջակցությունը:

Դպրոցը անձի սոցիալականացման կարևոր օղակ է, իսկ դասարանը առաջնային սոցիալական խումբ, որտեղ ապահովվում են սովորողների կողմից սեփական անձի ճանաչման և գնահատման կարողություններ: Կրթության հասանելիությունը, լիարժեք և չափորոշիչներին համապատասխանող բովանդակությունը, անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի առկայությունն է, որն ապահովում է անվտանգ կրթական միջավայր, հարմարավետ բարոյա-հոգեբանական մթնոլորտ, որտեղ աշակերտը զերծ է ցանկացած բռնությունից և հնարավորություն ունի սովորելու և առավելագույնս ստանալու իր անձի զարգացման համար կենսական օղակից՝ տարրական դպրոցից:

Դպրոցն այն միջավայրն է , որտեղ երեխան պետք է իրեն զգա ապահով, սիրված, արժևորվի որպես անհատ:

Իրավական ակտերը՝

- Դպրոցի կանոնադրություն
- Ներքին իրավական ակտեր
- ՀՀ նորմատիվ փաստաթղթեր

Փաստաթղթերի վարումը իրականացվում է սահմանված կարգով:

Դպրոցում գործում են.

- Կառավարման խորհուրդ
- Մանկավարժական խորհուրդ
- Առարկայական մեթոդմիավորում
- Ծնողական խորհուրդ

Դպրոցի կառավարման խորհուրդը ժամանակին և բարեխղճորեն կատարում է իր առջև դրված պարտականությունները: Խորհուրդը կազմված է բանիմաց անդամներից, որոնք անցել են վերապատրաստում և ունեն վկայականներ:

Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն:

Կառավարման խորհրդի և տնօրենի սերտ համագործակցությամբ դպրոցում իրականացվում են ներքոհիշյալ գործառույթները.

5. Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման նկատմամբ վերահսկողություն.
6. Կրթության որակի բարձրացում.
7. Ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավում.
8. Բյուջեի նախագծի մշակում, նախահաշվի քննարկում.
9. Տարիֆիկացիայի, հաստիկացուցակի քննարկում.
10. Ներքին կարգապահական կանոնների կատարման վերահսկողություն.

Կառավարման խորհրդի և տնօրենի համագործակցության շնորհիվ , դպրոցում քննարկվում և կայացվում են որոշումներ, որոնք բխում են սովորողի և Դպրոցի շահերից:

Տվյալներ ուսումնական.հաստատության կառավարման խորհրդի կազմի վերաբերյալ

Անուն, ազգանուն, հայրանուն	Աշխատանքի վայրը, զբաղեցրած պաշտոնը	Կրթությունը	Հաստատության խորհրդի կազմում ընդգրկված լինելու ժամանակահատվածը	Պետական պարգևները, կոչումները և այլն
Գալստյան Շավարշ	ԱՁ	բ/կ	2021-2023թթ.	-

Էդուարդի				
Մանուկյան Շանթ Սմբատի	Մարտունու Բ/Կ տնտեսվար	բ/կ	2021-2023թթ.	-
Քոչարյան Բակուր Վաչագանի	Ոստիկանության աշխատակից	բ/կ	2021-2023թթ.	-
Մանուկյան Արմեն Պռոշի	Գյուղապետարան Տնտեսագետ	բ/կ	2018-2023թթ.	-
Բաղդասարյան Հերմինե Գուրգենի	Ծովինարի տ/դ դասվար	մ/մ	2018-2023թթ.	-
Բաղոյան Աստղիկ Գաբրիելի	Ծովինարի տ/դ ուսուցչուհի	բ/կ	2018-2023թթ.	-
Զաքարյան Գայանե Լյովայի	Չի աշխատում	մ/մ	2022-2023թթ.	-
Կարապետյան Սյուզաննա Կորյունի	Չի աշխատում	բ/կ	2019-2023թթ.	-
Մարտոյան Միքայել Մարտիկի	ԱՁ	բ/կ	2021-2023թթ.	

Մանկավարժական խորհուրդ

Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկված են դպրոցի բոլոր ուսուցիչները: Բոլորն էլ բազմափորձ մասնագետներ են: Ունեն բարձրագույն կրթություն, մեկ ուսուցիչ ունի միջին մասնագիտական կրթություն, ով մասնակցելու է կամավոր ատեստավորման: Մանկարժների նպատակն է՝ աշակերտներին փոխանցել գիտելիքներ, սովորեցնել ինքնուրույն մտածել, վերլուծել և կայացնել որոշումներ, սովորեցնել սովորել: Ուսուցիչներն ուղղորդվում են նոր հանրակրթական պետական չափորոշիչով /ՀՊՉ/, տիրապետում են ՏՀՏ գործիքներին և իրենց գործունեությունը կազմակերպելիս օգտվում են այդ գործիքներից: Բարեխղճորեն կատարում են էլեկտրոնային մատյանի գրանցումները, կազմակերպում են տեսադասեր, բազմաբնույթ ուսուցողական, դաստիարակչական միջոցառումներ, էքսկուրսիաներ:

Տարաբնույթ աշխատանքներ են տարվում ուսման որակի բարելավման, սովորողների կարողությունների զարգացման, նրանց առողջության և անվտանգության պահպանման նպատակով:

Մեթոդական միավորում

Համաձայն Դպրոցի կանոնադրության՝ դպրոցում ձևավորվել է մեկ մասնագիտական խումբ՝ դասվարական մեթոդական միավորում:

Մեթոդական միավորումը ունի տարեկան աշխատանքային ծրագիր, գումարում է նիստեր: Նիստերի ընթացքում քննարկվում են ուսուցիչների հետ տարվող աշխատանքները, առարկայական նոր չափորոշիչներին, թեմատիկ պլանների մշակմանը, գրավոր աշխատանքների կազմակերպմանը, սովորողների գիտելիքների ստուգմանը և գնահատմանը առնչվող հարցեր, որոնց տրվում են պատասխաններ: Նիստերի ընթացքում քննարկվում են մանկավարժական-հոգեբանական բնույթի հարցեր, տարբեր մեթոդական նյութեր, մասնավորապես՝ ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության վերաբերյալ, քննարկվում են փոխադարձ դասալսումների արդյունքները, կրթության որակի բարելավման ուղիները, առաջավոր փորձը:

Ուսումնական հաստատության կապը ծնողների հետ

Սովորողի կրթադաստիարակչական գործընթացում առաջնային դեր ունի ընտանիքը, որի միջոցով երեխան սոցիալականացվում է, յուրացնում կյանքի հմտություններ, ձեռք բերում բարոյական արժեքներ, ընկալում հասարակական համակեցության նորմերը:

Ուսումնական հաստատության կապը ծնողների հետ երեխաների արդյունավետ կրթության ապահովման ծրագրի կարևոր մասն է կազմում: Ծնողների հետ տարվող աշխատանքի բարելավման միջոցները պետք է ուղղված լինեն Դպրոցի և ընտանիքի համագործակցության ամրապնդմանը: Ծնողները մշտապես կարիք ունեն տեղեկանալու իրենց երեխայի կրթության ընթացքի և արդյունքների մասին, ինչն ակտիվորեն պետք է ապահովի Դպրոցը՝ ծնողներին ներգրավելով դպրոցական կյանք, հրավիրելով ոչ միայն ծնողական ժողովների, այլև տարաբնույթ միջոցառումների, քննարկումների, շաբաթօրյակների, արշավների, ճանաչողական և ուսումնական էքսկուրսիաների, համատեղ իրականացնելով դպրոցական, համայնքային ձեռնարկներ, տարբեր ծրագրեր: Ծնողների հետ ցանկացած շփման ձև պետք է զուգակցել նրանց նկատմամբ ցուցաբերած մեծագույն հարգանքով:

Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային ու մասնագիտական բարձր որակների վրա՝ այն հստակ գիտակցումով, որ ծնողների հետ ցանկացած հաջող համագործակցությունից առաջին հերթին շահում է երեխան:

Ծնողների հետ համագործակցության ավանդական ձևերին պետք է ավելացնել ժամանակակից կառուցակարգեր, որոնք բխում են ուսումնական հաստատության այսօրվա պահանջներից `

ա) Այցելություն տուն – դասվարը այցելում է աշակերտի տուն՝ տեսնելու և ճանաչելու երեխային, ծանոթանալու նրա ընտանեկան պայմաններին:

բ) Հեռախոսային զանգերը – կարելի է հատուկ նպատակով ամիսը մեկ անգամ զանգահարել յուրաքանչյուր ընտանիքի՝ պարզապես հետաքրքրվելու երեխայի առօրյայով, արտադպրոցական հետաքրքրություններով ու ժամանցով:

գ) Ծնողական ժողովներ, որոնք նպատակ ունեն քննարկելու երեխաների առաջադիմությունը, ծնողներին հնարավորություն են տալիս արտահայտել իրենց մտահոգություններն ու ներկայացնել առաջարկություններ: Ժողովները նպաստում են աշակերտների անհատական պլանների կազմմանը և քննարկմանը:

դ) Առաջարկությունների տուփ – առաջարկվում է ծնողներին իրենց մտահղացումները, մտահոգությունները, առաջարկությունները , հարցերը գրավոր ներկայացնել մանկավարժական կոլեկտիվին՝ առաջարկությունների տուփի միջոցով, որը տեղադրվում է միջանցքում:

ե) Բաց դռների օրերը – ծնողական ժողովներից բացակայած ծնողների համար:

զ) Պատի տեղեկատու թերթերը, ինչպես նաև էլեկտրոնային կապի միջոցները – միշտ թարմ տեղեկություն հաղորդել ժողովների, հատուկ իրադարձությունների, ամենօրյա պարապմունքների, ընտանիքների համար նախատեսված միջոցառումների, ուսումնական հաստատության անցուդարձի մասին:

Համագործակցության առավելությունը – երբ ծնողները իրենք են սահմանում երեխայի մոտ որևէ կոնկրետ կարողություն դաստիարակելու կամ սովորեցնելու խնդիրները և դրանք լուծելու քայլերը, ավելի պատրաստակամ և հետևողական են այդ կանոնները պահելու և մանկավարժի հետ այդ ուղղությամբ համագործակցելու հարցում:

Այսպիսով, սովորողի դաստիարակությունը, ուսուցումը և զարգացումը լիարժեք կարելի է իրականացնել այն դեպքում, երբ ծնողի և ուսուցչի նպատակները, սկզբունքները և գործողությունները համընկնում են:

Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Համայնքը կատարել է ներդրում՝ Դպրոցում նախակրթարանի ստեղծման նպատակով, ինչի շնորհիվ 2012 թվականից դպրոցում գործում է նախակրթարան, որտեղ ընդգրկվում են համայնքի հինգ տարեկան երեխաները:

Թեև դպրոցը տարրական է, երեխաները իրենց տարիքին համապատասխան ձևաչափով մասնակցում են համայնքի կազմակերպած միջոցառումներին, շաբաթօրյակներին, ծառատունկներին: Աշակերտները կարևորում են իրենց դերը համայնքում և համայնքի դերը պետության մեջ:

Համայնքի բարերարների միջոցով ցանկապատվել է Դպրոցի տարածքը: Կառուցվել է խաղահրապարակ՝ երեխաների ժամանցի և հանգստի արդյունավետ կազմակերպման համար:

Կազմակերպվել է մանկական տեսուչների այց Դպրոց, անցկացվել են զրույցներ՝ զգուշացնելու բռնության, հոգեբանական օտարման, հալածանքի դեպքերի մասին և կանխարգելելու վտանգները:

Ապահովվել է ակտիվ մասնակցություն համապետական շաբաթօրյակներին, մաքրվել են պատմական հուշակոթողներ:

Դպրոցն ակտիվորեն ներգրավված է համայնքում տեղի ունեցող ավանդական միջոցառումներին, պետական տոների և հիշարժան իրադարձությունների կապակցությամբ կազմակերպվող ձեռնարկներին, տարաբնույթ ծրագրերի:

Ակնկալվող արդյունքներ

- Դպրոցական կրթությունը կլինի առավել արդյունավետ և մենք կունենանք կիրթ ու համակողմանի զարգացած սերունդ:
- Աշակերտների թվի աճ:
- Ուսուցչի հեղինակության բարձրացում:
- Առողջ և անվտանգ միջավայրի ապահովում:
- Հայրենասիրության ոգով դաստիարակված աշակերտներ:
- Գրագետ, հմուտ և ստեղծագործ մանկավարժներ:
- Որակյալ կրթություն:
- Համայնքի ակտիվ անդամներ, պետության ապագա պատասխանատու քաղաքացիներ:

Ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման և ուսումնական միջավայրի բարելավման գործընթացների ակնկալվող արդյունքներն են:

Ստեղծել՝

- Երեխաների և Մանկավարժների համար անվտանգ ֆիզիկական և սոցիալ-հոգեբանական առողջ միջավայր:
- Հարմարավետ և գրավիչ կրթական միջավայր:
- ՏՀՏ-ի արդյունավետ կիրառում ուսումնական գործընթացում:
- ԿԱՊԿՈՒ երեխաների լիարժեք ինտեգրում:

<u>Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար</u>

Դասարանների թիվը	2021-2022ուստար	2022-2023ուստար	2023-2024ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ

	ի	ի		նվազում)
1 -ին դասարան	1	1	1	
2-րդ դասարան	1	1	1	
3-րդ դասարան	1	1	1	
4-րդ դասարան	1	1	1	
ընդամենը	4	4	4	

Ըստ դասարանների՝ սովորողների թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Սովորողների թիվը	2021-2022ուստարի	2022-2023ուստարի	2023-2024ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
1-ին դասարան	8	9	8	Նվազում
2-րդ դասարան	11	8	9	Նվազում
3-րդ դասարան	12	10	8	Նվազում
4-րդ դասարան	8	11	10	Նվազում
ընդամենը	49	38	35	

Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Ցուցանիշը	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ	49	38	35	Նվազում
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա մայիսի 25-ի դրությամբ	48	37	35	Նվազում

Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը	0	1	0	
Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը	1	1	0	

Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Ցուցանիշը	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխություն ների դինամիկան (աճ կամ նվազում)
Ուսուցիչների ընդհանուր թիվը	10	10	10	
Ուսուցիչներիմիջինշաբաթականծ անրաբեռնվածությունընկամդրույք աչափը	6.6	6.6	6.6	Գրեթե անփոփոխ

Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Ուսուցիչների թիվը	2021-2022ուստարի	2022-2023ուստարի	2023-20234ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Մինչև 30 տարեկան	2	2	2	անփոփոխ
31-ից40 տարեկան	2	2	2	անփոփոխ
41ից 50 տարեկան	3	3	3	անփոփոխ
51-ից 55 տարեկան	2	2	2	
56 տարեկան և ավելի	1	1	1	անփոփոխ

Տվյալներ ուսումնական հաստատության ղեկավար և վարչական կազմի վերաբերյալ

Պաշտոնը	Քանակը	Դրույք
Տնօրեն	1	1
Տնօրենի տեղակալ Ուս. գծով		
Տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով		
Հաշվապահ	1	0,5

Ուսումնական հաստատության սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանումը

1. Ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար:
2. Ուսումնական հաստատությունը ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց:
3. Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին:
4. Ուսումնական հաստատության տարածքը մաքուր է, աղբը կանոնավոր հավաքվում է աղբարկղերում և դուրս բերվում հաստատության տարածքից:
5. Ուսումնական հաստատության ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ կրծողների դեմ:

Տվյալներ սովորողների առաջադիմության վերաբերյալ տվյալ և նախորդ 2 ուստարիների համար՝ ըստ կրթական աստիճանների

Ցուցանիշ	2021-2022ուստարի	2022-2023ուսատրի	2023-2024ուսատրի
	1-ից 4-րդ. դաս. .	1-ից 4-րդ. դաս.	1-ից 4-րդ. դաս.
Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների (տոկոսի հաշվարկը. տվյալ կրթական աստիճանում «9» և «10» տարեկանգնահատական ունեցող սովորողների թվի հարաբերությունը այդ կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	14 76%	12 82%	0

Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների (տոկոսի հաշվարկը. տվյալ կրթական աստիճանում «4», «5» և «6»տարեկան գնահատական ունեցող սովորողների թվի հարաբերությունը այդ կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	2 11%	1 4/1%	

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները:

Ուսումնական գործընթացը կազմակերպելու և հաջողությամբ իրականացնելու նպատակով ժամանակակից ենթակառուցվածքի ձևավորումը ուղղված է երեխաների, դպրոցական կարիքների և գործունեության իրականացմանը:

Ղեկավարվելով նոր ՀՊՉ-ի պահանջներով պետք է իրականացվի հետևյալ դրույթները

1. Պետք է պատրաստակամ լինել նորարություններին
2. Բարելավել նյութատեխնիկական բաղադրիչը

Դպրոցն ունի հարմարավետ դասասենյակներ, գրադարան, շախմատի կաբինետ, ճաշարան, լայնարձակ խաղահրապարակ և փոքր այգի: Ապահովված է աշակերտական սեղան աթոռներով : Ունի վերանորոգված երկու խմբասենյակ նախադպրոցական կրթություն իրականացնելու համար : Գրադարանը ունի վերանորոգման և նոր գույքի կարիք: Քանի որ դպրոցն իրականացնում է տարրական կրթություն այդ իսկ պատճառով չունի լաբորատորիա: Դպրոցը ունի հետնամուտք և ազատ տեղաշարժի հնարավորություն:

Մարդկային ռեսուսներ

Տնօրեն - 1 դրույք

Մանկավարժական անձնակազմ

Ուսուցչի օգնական -0,5 դրույք

Գրադարանավար – 0,5 դրույք

Դաստիարակներ – 2 դրույք

Օպերատոր – 0,5 դրույք

Հաշվապահ – 0,5 դրույք

Խոհարար – 0,75 դրույք

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

Կառավարման խորհուրդ

Ծնողական խորհուրդ

Նշված մարդկային, բյուջետային և տեխնոլոգիական ռեսուսների օգտագործումը համապատասխանում են կրթական գործընթացի իրականացմանը: Հանդիսությունները և միջոցառումները իրականացվում են միջանցքում: Օգտագործվում է պռոյեկտոր, նոթբուկ և ինտերակտիվ գրատախտակ :

Ուսումնական հաստատության իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմերը

Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծություն	
Ուժեղ	Թույլ

Վերանորոգված է Ունի շուրջօրյա ջրամատակարարում սառը և տաք ջրով Ունի սանհանգույց Գործում է լոկալ ջեռուցման համակարգ Ունի հարմարավետ ճաշարան, կենցաղային տեխնիկայով հագեցած խոհանոց և պահեստ Բակում կառուցված է խաղահրապարակ Վերանորոգված տանիք Ցանկապատված է Բակում կան նստարաններ Կան կրակմարիչներ Մուտքի մոտ կառուցված է թեքահարթակ Դեպի դպրոցի մուտքերն ու ելքերը տեղաշարժն ազատ է բոլոր տեսակի տրանսպորտայի միջոցների համար Ունի անխափան համացանցային կապ	Չունի մարզասրահ, միջոցառումների համար նախատեսված դահլիճ Բակը ունի ասֆալտապատման կարիք Չունի բուժկետ և պահակակետ Գրադարանն ունի վերանորոգման և արդիականացման կարիք Ծախմատի դասարանն ունի կահավորման կարիք
Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծությունը	
Ուժեղ	Թույլ

Հագեցած գրադարան ՝ 4000 գիրք Ուսումնամեթոդական ուղեցույցներ, քարտեզներ, պաստառներ Հագեցած է ՏՀՏ գործիքներով ՝ Դյուրակիր համակարգիչ Լուսացրիչ /պրոյեկտոր/ Համակարգիչ Ինտերակտիվ գրատախտակ Տպիչ Հագեցած է ամբողջովին նոր աշակերտական սեղան-աթոռներով Նախակրթարանը ևս հագեցած է նոր սեղան-աթոռներով, պահարաններով, մանկական զարգացնող խաղալիքներով և սպորտային գույքով	Կա մանկական գրականության պահանջ Ունի շախմատի խաղատախտակների և ժամացույցների կարիք
Մանկավարժական համակազմ Մանկավարժական համակազմի մասնագիտական որակները Մանկավարժական համակազմի մասնագիտական որակները զարգացնելու և ապահովելու նպատակով մանկավարժներն անցնում են վերապատրաստումներ, որոնք բարձրացնում են մասնագիտական կարողությունները՝ արդյունավետ կազմակերպելու ուսումնական գործընթացը, տալիս է նոր փորձ և հմտություն՝ ճիշտ կազմակերպելու ներառական կրթությունը, մշակելու ԱՈՒՊ-ներ , կիրառելու ՏՀՏ գործիքներ:	
Ուժեղ	Թույլ

Դպրոցն ունի 6 ուսուցիչ, որից 5-ն ունեն բարձրագույն կրթություն, 1-ը՝ միջին մասնագիտական կրթություն , ով դիմել է կամավոր ատեստավորման Գրադարանավար՝ 1 Ուսուցչի օգնական՝ 1 Դաստիարակ՝ 3 Բոլոր ուսուցիչներն անցել են պարտադիր ատեստավորում Կան նաև նոր չափորոշչով վերապատրաստված 2- րդ դասարանի ուսուցիչներ Ուսուցիչները տիրապետում են ՏՀՏ գործիքներին և լիաժեք կատարում են էլեկտրոնայի մատյանի վարման աշխատանքները Օգտագործում են տեսադասեր, ինչպես նաև իրենք են կազմակերպում տեսադասեր Կազմակերպում են փոխադարձ դասալսումներ Քննարկում նոր առարկայական ծրագրեր	Չկա կամավոր ատեստավորմանը մասնակցած ուսուցիչ
Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն	
Ուժեղ	Թույլ

Նախակրթարանն ավարտելուց հետո երեխան պատրաստ է դպրոցական կյանքի և ուսումնառության Երեխաները կրթվում և դաստիարակվում են 4 ուղղություններով ` Սոցիալական Ֆիզիկական Հուզակամային Իմացական Դպրոցն ուսումնասիրում է 2 օտար լեզու՝ Ռուսերեն Անգլերեն Կազմակերպվում են ճանաչողական էքսկուրսիաներ Հայաստանի ողջ տարածքով Կազմակերպվում են միջոցառումներ՝ նվիրված հայոց մեծերին, մայրենի լեզվին, հայոց բանակին Անցկացվում են միջդասարանական խաղ-վիկտորինաներ	Մարզադահլիճի բացակայության պատճառով ֆիզկուլտուրայի դասաժամերը թերի են անցկացվում:
Ապահով միջավայր	
Ուժեղ	Թույլ

Դպրոցի անձնակազմը հետևողական է, որպեսզի դպրոցում չլինի խտրական վերաբերմունք, երեխան իրեն զգա ապահով և սիրված, ձևավորվի որպես հասարակության լիիրավ անդամ: Դպրոցում յուրաքանչյուր աշակերտ անհատ է, ով իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը:	Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի մշակույթի տարածման համար անհրաժեշտ պայմանների, փակ մարզասրահի և բացօդյա մարզահրապարակի բացակայություն:

Բյուջետային հնարավորությունները

Ուսումնական հաստատության բյուջեի ծախսերն ունեն հետևյալ հիմնական ուղղությունները:

- 2023 թվականի ֆինանսավորումը պետական բյուջեից կատարվել 22448,1 հազար դրամ (8 ամսվա համար)
- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ՝ 19,500.0 հազար դրամ

Էներգետիկ ծառայություններ՝ 1,547.2 հազար դրամ

- Կոմունալ ծառայություններ՝ 50.0 հազար դրամ
- Կապի ծառայություններ՝ 72.0 հազար դրամ
- Ներքին գործուղումներ՝ 60.0 հազար դրամ
- Համակարգչային ծառայություններ՝ 110.0 հազար դրամ
- Տեղեկատվական ծառայություններ՝ 20.0 հազար դրամ
- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում՝ 100.0 հազար դրամ
- Գրասենյակային նյութեր և հագուստ՝ 150.0 հազար դրամ
- Կենցաղային և հանրային սննդի նյութեր՝ 1,950.0 հազար դրամ
- Հատուկ նպատակային այլ նյութեր՝ 100.0 հազար դրամ
- Պարտադիր վճարներ՝ 50.0 հազար դրամ
- Այլ ծախսեր՝ 21.5 հազար դրամ

Զարգացման ծրագրում նախատեսված նպատակների իրականացման և կատարողական արդյունքների ձեռքբերման համար անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ, կազմակերպել միջոցառումներ՝ ուղղված բարեգործական, ձեռնարկատիրական, լրացուցիչ հանրակրթական ծրագրերի, ուսումնաարտադրական գործունեության, դրամաշնորհային նախագծերին մասնակցության ապահովմանը:

Սահմանված նպատակների, խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ, միջոցառումներ և ժամանակացույց

Գործողություն	Պատասխանատու	Ժամանակացույց	Ֆինանսական միջոցներ	Ակնկալվող արդյունք	Վերահսկողություն
1.Մարզադահլիճի կառուցում	Տնօրեն, համակարգող, հաշվապահ	2023-2024թթ.	Պետբյուջե	Ֆիզկուլտուրայի դասապրոցեսի լիարժեք կազմակերպում	Կառավարման խորհրդի կողմից զարգացման ծրագրի վերահսկողության իրականացում:
2.Միջոցառումների դահլիճի կառուցում,	Տնօրեն, համակարգող, հաշվապահ	2024-2025թթ.	Պետբյուջե	Միջոցառումների լիարժեք կազմակերպում	Կառավարման խորհրդի կողմից զարգացման ծրագրի վերահսկողության իրականացում:
3.Պահակակետի կառուցում	Տնօրեն, համակարգող, հաշվապահ	2024-2025թթ.	Դպրոցի ֆինանսական միջոցներով	Անվտանգության ապահովում	Կառավարման խորհրդի կողմից զարգացման ծրագրի վերահսկողության իրականացում:
4.Տեսախցիկների			Դպրոցի		Կառավարման խորհրդի

տեղադրում	Տնօրեն, համակարգող, հաշվապահ	2023-2024թթ.	ֆինանսական միջոցներով	Անվտանգության ապահովում	կողմից զարգացման ծրագրի վերահսկողության իրականացում
5.Դպրոցի ներսում ԿԱՊԿՈՒ երեխաների տեղաշարժի հնարավորության ստեղծում	Տնօրեն, համակարգող, հաշվապահ	2023-2024թթ.	Դպրոցի ֆինանսական միջոցներով	Անվտանգության ապահովում	Կառավարման խորհրդի կողմից զարգացման ծրագրի վերահսկողության իրականացում:

Գործողություն	Պատասխանատու	Ժամանակացույց	Ակնկալվող արդյունք
1.Մանկավարժների խրախուսում՝ ● Լավագույն ուսուցիչ ● Լավագույն դասվար	Տնօրենություն Մ/Մ նախագահ	2023-2028թթ	Մանկավարժների գիտելիքների որակի բարձրացում
2.Խրախուսում հուշանվերներով և պատվոգրերով	Տնօրենություն Մ/Մ նախագահ	2023-2028թթ	Մանկավարժների դերի բարձրացում
3. Դասալսումներ և քննարկումներ	Տնօրենություն Մ/Մ նախագահ	2023-2028թթ	Մանկավարժների գիտելիքների որակի բարձրացում
4.Սեմինար քննարկումներ ներառական կրթության վերաբերյալ	Տնօրենություն Մ/Մ նախագահ ՏՄԱԿ-ի աշխատակիցներ	2023-2028թթ	Որակյալ կրթություն բոլորի համար
5.Հանրակրթության	Տնօրենություն	2023-2028թթ	

նոր չափորոշչով դասապրոցեսի կազմակերպում 6.ՏՀՏ գործիքների օգտագործումը	Մ/Մ նախագահ Տնօրենություն օպերատոր	2023-2028թթ	Նորարական մեթոդների կիրառում

Գործողություն	Պատասխանատու	Ժամանակացույց	Ակնկալվող արդյունք
1.Սովորողների մասնակցությունը ամենամյա մանկական մրցույթներին՝ ‹‹Մեղու››, ‹‹Կենգուրու››, ‹‹Արջուկ››, ‹‹Ճախմատ›› և այլն	Տնօրենություն Դասվար Ծնողական խորհուրդ	2023-2028թթ	Մոտիվացում
2.Երկարօրյա ուսուցում	Տնօրենություն Դասվար Ծնող	2023-2028թթ	Կրթության որակի բարձրացում
3.Խմբային աշխատանքներ	Դասվար	2023-2028թթ	Կրթության որակի բարձրացում
4.Ինտելեկտուալ խաղ-վիկտորինաներ	Դասվար	2023-2028թթ	Կրթության որակի բարձրացում

Համագործակցություն համայնքի հետ

Գործողություն	Պատասխանատու	Ժամանակացույց	Ակնկալվող արդյունք	Վերահսկողություն
1.Համագործակցել՝ ● Համայնքի ● Միջնակարգ դպրոցի ● Մշակութային կենտրոնի հետ	Տնօրենություն, Դասվար, Ծնողական խորհուրդ Տնօրենություն, Դասվար Տնօրենություն, Դասվար ՈւՕ	2023-2028թթ. 2023-2028թթ. 2023-2028թթ.	Համայնքի լիիրավ և պատասխանատու անդամի դաստիարակում Փորձի փոխանակում Մշակութային դաստիարակության ապահովում, ծանոթություն հայկական մշակույթին և	Կառավարման խորհրդի կողմից զարգացման ծրագրի վերահսկողության իրականացում:

			արվեստին	

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման ընթացքում հնարավոր ռիսկերը և դրանց մեղմացնող կամ չեզոքացնող գործողությունները

Ռիսկեր	Մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ
1. Մանկավարժական որակյալ կադրերի պակասը 2. Ֆինանսական ոչ բավարար ռեսուրսները 3. Ուսուցիչների, ծնողների և սովորողների՝ ներառականության նկատմամբ ունեցած կարծրատիպերը	1.Մրցույթային կարգով այլ համայնքներից մանկավարժների ներգրավումը 2. Ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործումը և դրամաշնորհատու /դոնոր/ կազմակերպությունների օժանդակությունը 3.Ուսուցիչների, ծնողների, սովորողների շրջանում բացատրական աշխատանքների կազմակերպումը, հոգեբանների մասնակցությամբ սեմինարների, քննարկումների անցկացումը:

Զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի գնահատումը և վերահսկողությունը վերապահված է դպրոցի կառավարման խորհրդին, որը այն իրականացնում է ‹‹Հանրակրթության մասին›› ՀՀ օրենքի համաձայն:

Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 2017թ., ըստ կանոնադրության և կրթական աստիճանի իրականացվում է տարրական կրթություն (առաջին աստիճան) : Զարգացման ծրագիրը կազմված է կանոնադրության պահանջներին համապատասխան: Դպրոցի կառավարման խորհուրդը վերահսկում է զարգացման շրագիրը ըստ ժամանակացույցի, ուսումնասիրում է հաշվետվությունները: Հաշվետվությունների հիմքում ընկած են յուրաքանչյուր գործողության վերլուծությունը, այդ գործողությունների համար կազմված հաշվետվության ձևերը և ժամանակացույցը:

- Նյութատեխնիկական բազա, ֆինանսական միջոցներ
- Մարդկային ռեսուսներ
- Ապահով շենքային պայմաններ

Յուրաքանչյուր ոլորտի վերլուծության ընթացքում նշված են ժամանակացույցները:

Դպրոցում գործում է դասվարական մեթոդմիավորում, որն էլ վերահսկում է ուսուցիչների կողմից ներկայացրած ամենամյա հաշվետվությունները ծրագրերի իրականացման և դասարանների վերաբերյալ: Հիմք ընդունելով այդ հաշվետվությունները, կատարողականի մասին հաշվետվություն են ներկայացնում տնօրենը և մեթոդմիավորման նախագահը:

Հաշվետվություններ են ներկայացնում խմբակների, երկարօրյայի, նախագծային աշխատանքի ղեկավարի, դասվարների, արտադասարանական միջոցառումների կազմակերպչի կողմից: Տնօրենը ուսումնասիրում և կազմում է հաշվետվություն: Այն ներկայացնում է կառավարման խորհրդին ըստ ժամանակացույցի: Վերահսկողությունը իրականացվում է

ա , հայտորոշիչ, բ, ձևավորվող, գ, ամփոփիչ գնահատման մեթոդով:

Վեահսկողության ժամանակացույցը կարող է ենթարկվել փոփոխության հավանական ռիսկերի պատճառով:

Գնահատումը կատարվում է հետևյալ ուղղություններով

1. Ֆինանսական միջոցների ճիշտ պլանավորում և օգտագործում:
2. Սանիտարահիգիենիկ նորմերի պահպանում, տարածքի անվտանգության ապահովում:
3. Սովորողների առաջադիմության բարձրացում, ուսուցման և ուսումնառության որակի ապահովում:
4. Ոսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ իրականացում:
5. Մանկավարժական անձնակազմի համապատասխանությունը արդի չափորոշիչներին, ուսուցիչներին ներկայացվող պահանջներին:
6. Նոր հանրակրթության պետական չափորոշչով ուսումնական պլանի կազմում:

Տնօրենը կազմում է տարեկան աշխատանքային պլան, որի ուսումնասիրությամբ կառավարման խորհուրդը առաջնորդվում և գնահատում է կատարված աշխատանքը: Ժամանակացույցին համապատասխան՝ քննարկվում են այն ոլորտները, որոնք լիարժեք կատարված են, իսկ այն ոլորտները, որտեղ աշխատանքները չեն կատարվել, կդառնան քննարկման առարկա, կտրվեն խորհուրդներ և աջակցություն, կկազմվեն գործողությունների պլաններ, կներկայացվեն հաշվետվություններ: Վերահսկողությունը կիրականցվի տվյալ ուտարվա ընթացքում, որն իր մեջ կներառի `

1. ՀՊՉ-ի իրականացումը
2. Մանկավարժական համակազմի զարգացման աստիճանը
3. Մեթոդմիավորումների արդյունավետ աշխատանքը
4. Խմբակների, երկարօրյա խմբերի աշխատանքը
5. Նյութատեխնիկական բազայի համալրումը
6. Ոսումնադաստիարակչական և արտադասարանական խմբակների աշխատանքը
7. Սանիտարահիգիենիկ վիճակի բարելավումը

Կառավարման խորհրդի վերահսկողությամբ և գնահատմամբ տնօրենը կկարողանա կյանքի կոչել դպրոցի զարգացման ծրագիրը:

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության բարելավումը և պլանավորումը

1. Դպրոցի մարզադահլիճի կառուցում
2. Բացօթյա սպորտհրապարակի կառուցում
3. Դպրոցի միջոցառումների դահլիճի կառուցում
4. Դպրոցի շրջակայքի բարելավում
5. Ծախսատի գույքի ձեռքբերում
6. Մանկական գրականության ձեռքբերում
7. Գրադարանի վերանորոգում և արդիականացում

Դպրոցի Ուսումնադաստիարակչական գործունեության բարելավումը և պլանավորումը

1 .Ժամանակակից ինտելեկտուալ և զարգացնող խաղերի կազմակերպում:

2 . Խմբային աշխատանքներ :

3. Նոր մեթոդների կիրառում դասապրոցեսի ընթացքում:

4. Ազգային արժեքային համակարգի, համամարդկային արժեքների, մայրենի լեզվի, մշակույթի և ազգային ավանդույթների նկատմամբ հարգանքի ձևավորում:

5.Ինքնաճանաչման , ինքնահաստատման ներքին պահանջի ձևավորում:

6. Հայրենասիրության և մարդասիրության ձևավորում:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Գնահատում	Արդյունքի գնահատում	Արդյունքի գնահատման չափանիշները

1.Մարզադահլիճի կառուցում	**Գերազանց**	**Ամբողջովին կատարված աշխատանք**
2.Բացօթյա սպորտհրապարակի կառուցում	**Լավ**	**Մասնակի կատարված աշխատանք**
	Անբավարար	**Ամբողջովին չկատարված աշխատանք**
3.Դպրոցի միջոցառումների դահլիճի կառուցում	**Գերազանց**	**Ամբողջովին կատարված աշխատանք**
4.Գրադարանի նորոգում և արդիականացում	**Լավ**	**Մասնակի կատարված աշխատանք**
	Անբավարար	**Ամբողջովին չկատարված աշխատանք**
4.Բակի տարածքի բարելավում	**Գերազանց**	**Կրթության որակի կտրուկ աճի դինամիկա**
	Լավ	**Կրթության որակի մասնակի աճի դինամիկա**
	Անբավարար	**Կրթության որակի ոչ շոշափելի դինամիկա**
5.Կրթության առաջադիմության բարձրացում	**Գերազանց**	Անձնակազմի մասնակցությունը վերապատրաստումներին
	Լավ	Կա լիարժեք պայմաներ, բայց չկա լիարժեք ընդգրկվածություն
	Անբավարար	Ինքնակրթության համար ոչ բավարար պայմաններ և միջավայր
	Գերազանց	Սովորողների շրջանում ձևավորված են ինքնադրսևորման, ազատ արտահայտվելու, կարծիք ունենալու և դիրքորոշում

6.Անձնակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորում	**Լավ** **Անբավարար** **Գերազանց**	հայտնելու կարողություններ Սովորողների շրջանում կա մասնակցային աշխատանքի կարևորության և ժողովրդավարական արժեքների գիտակցում, ձևավորվել է համայնքի ակտիվ անդամի դիրքորոշում
7.Դպրոցում բազմակարծիք ներառական, մասնակցային, արժեքային միջավայրի ձևավորում	**Լավ** **Անբավարար** **Գերազանց**	Թույլ մոտիվացիա Կա ակտիվ համագործակցություն Կա պասիվ համագործակցություն Չկա համագործակցություն
8. Տնօրենի և կառավարման, ծնողական և մանկավարժական խորհուրդների համագործակցությունը	**Լավ** **Անբավարար** **Գերազանց**	Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, սովորողները և անձնակազմը ստանում են տեղեկատվություն իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ Եթե լինում են դեպքեր, ապա անմիջապես կանխարգելվում են Դեպքերի առկայության դեպքում այն չի շտկվում, կա վախ և նորմերի լուրջ խախտում
9.Դպրոցում բացառել բռնության, օտարման և հալածանքի երևույթները	**Լավ** **Անբավարար**	ՏԻՄ-ը, ծնողական համայնքը ակտիվ մասնակից են դպրոցի ուսումնադաստիրակչական աշխատանքներին ՏԻՄ-ը, ծնողական համայնքը ակտիվ չեն

10.Համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմնի, ծնողական համայնքի և գործընկերների հետ 11. Արտադպրոցական և երկարօրյա ուսուցում	**Գերազանց** **Լավ** **Անբավարար**	Կապը ամբողջովին բացակայում է Ստեղծված են պայմաններ սովորողների ժամանակը ռիացիոնալ անցկացնելու համար, գործում են սպորտային, գեղագիտական, երաժշտական խմբակներ Քիչ է ընդգրկվածությունը Արտադպրոցական աշխատանք չի իրականացվում և չկա երկարօրյա ուսուցում